

Հունիսի 26-ը թմրամիջոցների չարաշահման և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային օրն է

26 Հունիսի 2018 թվական, երեքշաբթի



ԽՈՐՀՈՒՐԴՆ Է՝ «ԱՌԱՋԻՆԸ ԼՍԵՔ»

ԿԱՐԳԱԽՈՍՆ Է՝ «Լսեք երեխաներին և երիտասարդներին, սա առաջին քայլն է, որպեսզի օգնենք նրանց դառնալ առողջ և անվտանգ»

1987 թվականի դեկտեմբերի 7-ին ՄԱԿ-ի Գլխավոր Համաժողովը ընդունել է 42/112 հռչակագիրը, ըստ որի որոշվել է հունիսի 26-ը նշել որպես թմրամիջոցների չարաշահման և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային օր, ի նշան իր վճռականությանը հզորացնել գործողությունները և համագործակցությունը՝ թմրամոլությունից զերծ միջազգային հասարակություն ստեղծելու համար:

Թմրամիջոցների չարաշահման և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի նպատակով ՄԱԿ-ի Գլխավոր Համաժողովի կողմից ընդունվել են երեք կոնվենցիաներ՝

1. «Թմրամիջոցների մասին 1961 թվականի միասնական կոնվենցիա՝ փոփոխված «Թմրամիջոցների մասին 1961 թվականի միասնական կոնվենցիայի փոփոխությունների մասին» 1972 թվականի արձանագրությանը համապատասխան
2. 1971 թվականի «Կոնվենցիա հոգեմետ նյութերի մասին»
3. 1988 թվականի «Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիա թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին»

1993 թվականին Հայաստանի Հանրապետությունը անդամակցել է ՄԱԿ-ին և վավերացվել է վերոնշյալ կոնվենցիաները:

ՀՀ նախագահի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 226-Ն կարգադրությամբ՝ «Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ռազմավարությունը հաստատելու մասին» մատնանշվել են թմրամիջոցների չարաշահման և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի ռազմավարական ուղղությունները:

Կարգադրությունով ՀՀ կառավարությանը հանձնարարված է կարգադրության ռազմավարության դրույթներն իրականացնող միջոցառումները ներառել թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի տարեկան ծրագրերում: Միջոցառումներում ընդգրկված են գրեթե բոլոր գերատեսչությունները: Վերոնշյալ կարգադրության իրականացնողներից է նաև ՀՀ առողջապահության նախարարությունը, ում շնորհիվ հանրապետության ողջ տարածքում ուժեղացված է նարկոլոգիական ծառայությունը և ՀՀ քաղաքացիներին տրամադրվում է անվճար նարկոլոգիական բժշկական օգնություն և ծառայություններ:

Վիճակագրություն՝

Աշխարհում թմրամիջոցներ չարաշահողների թիվը կազմում է շուրջ 1/4 միլիարդ. մարդ, նրանցից 29,5 միլիոն մարդ տառապում է թմրամիջոցների գործածումից առաջացած հոգեկան և վարքային խանգարումներով:

Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվառված թմրամոլների թիվը կազմում է 6544, նախորդ տարվա 6010-ի համեմատությամբ, որոնցից՝

ափիոնային թմրամոլները՝ 2476, որոնցից կանայք՝ 49

կանաբինոիդային թմրամոլները՝ 4065, որոնցից կանայք՝ 56

3-ը՝ կոկաինային թմրամոլներ

Հաշվառվածներից՝

62%-ը 28-49 տարեկան են

19% -ը՝ 50-64 տարեկան

17%-ը՝ 19-27 տարեկան

65 և բարձր տարիքի 76 անձ

Մինչև 18 տարեկան 7 անձ

Տարածվածությամբ 1-ին տեղում Երևանն է՝ 3007 կամ 52%, 2-րդը Արմավիրի մարզն է՝ 722 կամ 12% և 3-րդը Կոտայքի մարզը՝ 542 կամ 9%:

Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվառված թմրամոլների թիվը կազմում է 5828, նախորդ տարվա 5357-ի համեմատությամբ, որոնցից

ափիոնային թմրամոլները՝ 2307, որոնցից կանայք՝ 47

կանաբինոիդային թմրամոլները՝ 3519, որոնցից կանայք՝ 41

2-ը՝ կոկաինային թմրամոլներ:

Հաշվառվածներից՝

69%-ը 28-49 տարեկան են

18% -ը՝ 50-64 տարեկան

12%-ը՝ 19-27 տարեկան

65 և բարձր տարիքի 38 անձ

Մինչև 18 տարեկան 6 անձ

Տարածվածությամբ 1-ին տեղը Երևանն է՝ 3007 կամ 52%, 2-րդ Արմավիրի մարզը՝ 722 կամ 12% և 3-րդը Կոտայքի մարզը՝ 542 կամ 9%: